<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/4>> ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով

գնում կատարելու ընթացակարգի հնարավոր

մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/4>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Թիվ 9 մանկական պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանք/ներ/:

Սույն հրավերի /ծանուցման/ ծածկագիր է հանդիսանում <<ՄՊՕ9-ՇՀԱՊՁԲ-16/2>>:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել Զ. Անդրանիկ 2 հասցեով, մինչև սույն թվականի փետրվարի 1- ը, ժամը 10:00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Կարինե Հովսեփյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն <<Թիվ 9 մանկական պոլիկլինիկա>> ՓԲ ընկերության շենքում Զ. Անդրանիկի 2 հասցեում, 302 սենյակում, սույն թվականի փետրվարի 1-ին, ժամը 10:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում <<Թիվ 9 մանկական պոլիկլինիկա>> ՓԲ ընկերության կարիքների համար դեղորայքի ձեռքբերումը:

<<Թիվ 9 մանկական պոլիկլինիկա>> ՓԲ ընկերության կարիքների համար դեղորայքի մատակարարման /որոնք կազմված են 7 չափաբաժիններից/ տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը:

Ապրանքների մատակարարման պայմաններն են.

-պոլիկլինիկայի ծառայություններից օգտվող բնակչությանը պետք է դեղատոմսերով դեղորայքը անվճար ստանա դեղատնից, որը պետք է գտնվի <<Թիվ 9 մանկական պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի տեղակայման վայրից ոչ հեռու, տրանսպորտային երթուղիներին մոտ և ունենա հոգեմետ դեղորայքի վաճառքի համար նախատեսված լիցենզիա:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում /Հավելված N5/, ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ /Հավելված 5.1/: Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՄՊ09-ՇՀԱՊՁԲ-16/2 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով :

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

<<Թիվ 9 մանկական պոլիկլինիկա>> ՓԲ ընկերության էլեկտրոնային փոստի հասցեն է mp09@mail.ru:

Եթե, հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ /լրացուցիչ/ փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով /ծանուցումով/՝ հղում կատարելով ՀՀ նորմատիվ իրավական ակտի համապատասխան /կոնկրետ/ դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Տնօրեն՝ Ե. Մ. Սարգսյան